

Միրելի Տիկ. Արփի Ավանեսեան Տնօրէնուհի
Բարեգործական Մանուկեան Տէմիրճեան Վարժարանի
Պատուարժան Ուսուցիչ- ուսուցչուհիներ
Յարգելի ծնողներ, սաներ ու ներկաներ,

Հաւաքուած ենք այստեղ պատուելու անձնաւորութիւն մը, որն այս ուսումնարանէն ներս, 30 տարիներու անխոնջ ծառայութեան ընթացքին, գիտութեան սերմեր ցանած է հայորդի մատղաշ սերունդի մտքի դաշտին: Միտքս կու գայ Դանիէլ Վարուժանի «Յան»ը

Յանէ՛, ցանէ՛. նոյնիսկ հեռու սահմանէն,
Աստղերու պէս, ալիքներու պէս ցանէ՛:
Ծիտերն ի՛նչ փոյթ թէ հատիկներդ կ'աւերեն.
Տեղը Աստուած պիտի մարգրիտ սերմանէ:

Սերմնացանը միայն սերմեր նետողը չէ, այլ այդ սերմերուն ապրումին եւ աճման համար գետին պատրաստողն է եւս: Անտարակոյս, Տիկին Լենա Արսլանեան, որպէս վաստակաշատ ուսուցչուհի՝ աստղերու պէս, ալիքներու պէս ցանած է ու առատօրէն տուած իր մտքէն ու հոգիէն: Մեսրոպեան շունչով, ան սերունդներ դաստիարակած է ու այժմ կը կենայ մեր առջեւ որպէս դափնեկիր:

Տիկին Լենա Արսլանեան իր կրթական կոչումին հաւատարիմ՝ չէ զլացած տալու նորափթիթ սերունդին անհրաժեշտ ուսուցմունքը հայերէն լեզուի եւ գրականութեան վերաբերեալ: Անոր շունչին տակ հասակ առած սերունդներ, կը հաւատանք որ, նոյն ոգիով պիտի դաստիարակեն յաջորդ սերունդները:

Մեր սրտի բաղձանքն է ու երագանքը, որ Տիկին Արսլանեանի նման սերմնացանները անպակաս ըլլան սփիւռքի հայ կեանքերէն ներս, որովհետեւ անոնց կարիքը զգալի է մանաւանդ այս օրերուս:

Լսած եմ, որ շատեր կ'արտայայտուին մեր ամենաթանկ գանձին՝ հայերէն լեզուի հանդէպ. «Թէ ի՞նչ պէտք ունին մեր զաւակները հայերէն սորվելու», «Անգլերէնը ամէն դուռ բացող բանալի մըն է՝ կեանքի ասպարէզէն ներս», եւ թէ «հայերէնը մեր զաւակներուն ապագայ մը չի խոստանար»: Այդ ամէնը, սիրելիներ, շատ հաւանաբար ճիշդ կրնայ ըլլալ: Սակայն, մի՛ մոռնաք, որ դուք, հազարամեակներու պատմութիւն ունեցող նոյն Արարատի ժողովուրդն էք: Աշխարհի վրայ ամենահին ազգերէն մին էք: Միրեցէ՛ք հայերէնը, փայփայեցէ՛ք ձեր ինքնութիւնը եւ հպարտացէ՛ք ձեր հազարամեայ պատմութեամբ: Սայաթ Նովայի խօսքով.- *«Ամեն մարդ չի կանա իսի՝ իմ ջուրն ուրիշ ջրէն է: Ամեն մարդ չի կանա կարդայ՝ իմ գիրն ուրիշ գրէն է:*

Տիկին Արսլանեան, յանուն Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեանի կը շնորհաւորենք ձեզ այս բարեբաստիկ առիթով, ձեր վարձքը կատար եւ իսկապէս աւելիին արժանի էք: Հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց: Այժմ կ'ուզեմ յանձնել Սրբազան Հօր գնահատագիրը նուիրուած ձեր 30 տարիներու հայրենասնուէր ծառայութեան: Շնորհակալութիւն: